Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Պ-097-09.04.2019-ՍՍԳԲ-011/0 ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Պատգամավոր Վարազդատ Կարապետյան** | Օրենքի նախագիծ Հոդված 1 | Օրենքի հոդված 1 շարադրել հետևյալ բովանդակությամբ՝<br><br>բ) յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարը կատարել ընկերության համապատասխան հաշվին գումարի՝ բանկային, փոստային կամ այլ փոխանցման ձևով մուտքագրման եղանակով, մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը: | Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | **Պատգամավոր Տաթևիկ Գասպարյան** | Օրենքի նախագիծ Հոդված 2 | Օրենքի հոդված 1 շարադրել հետևյալ բովանդակությամբ՝<br><br>2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից: | Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է: | Ընդունվել է: |
| 3. | **ՀՀ կառավարություն** | Օրենքի նախագիծ | 1. Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ պարբերության «բ» կետը թողնել անփոփոխ<br>2. օրենքի 21-րդ (Ընկերության անդամներից գանձվող վճարների տեսակները) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.<br><br>«Մատակարարված ոռոգման ջրի վճարի վճարման կարգը սահմանում է ջրային համակարգերի կառավարման ոլորտում պետական քաղաքականություն մշակող մարմինը:»: | Չի ընդունվել<br><br>Չի ընդունվել | Չի ընդունվել<br><br>Չի ընդունվել |